ՆՈՐ-ԴԱՐ

№ 64 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 28 Ապրիլի **1888** Հինգշաբթի 28 Ապրիլի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 64

Տարեկան 10 րուբլի, վեց ամսը՝ 6 րուբլի, երեք ամսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատի

Ներկայ ապրիլ ամսի 24—25-ի գիշերուայ ժամը 12-ից 40 ր. անց կնքեց իւր երկրաւորը

ՐԱՖՖԻՆ.

Հոգեհանգիստը կը կատարուի հինգշաբթի, ապրիլի 28-ին, երեկոյեան ժամը 6-ին, Սոլոլակ, Նովօ-Օրլովսկի փողոց, հանգուցեալի բնակարանում։ Թաղումը կը կատարուի միւս օրը՝ ուրբաթ, ապրիլի 29-ին։ Յուղարկաւորութեան հանդէսը կսկսուի առաւօտեան ժամը 9-ը 15 րոպէին։ Հանգուցեալի մարմինը կը տանեն Վանքի մայր եկեղեցին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

- † Րաֆֆի.
- Քրոնիկոն —Լուրեր։
- Թղթակցութիւններ. — Դերբէնդից։ Բագուից։ Նամակ Թիւրքիայից.—Կ. Պօլիս։
- Քաղաքական.—Լուրեր։
- Խառն Լուրեր.
- «Նոր-Դար»-ի հեռագիրներ։
- Յայտարարութիւններ։

† ՐԱՖՖԻ

Ապրիլի 24-ին գիշերը վախճանուեցաւ Րաֆֆին։ Զատկին, քրիստոնեաների ամենամեծ և ուրախութեան տօնին, այն օրը, որ լոյսը յաղթում է խաւարին և մարդկութեան Փրկիչը Յարութիւն է առնում, հայ նոր գրականութիւնը կորցրեց իւր ամենայայտնի մատենագիրներից մէկին։ Մեռաւ Րաֆֆին, մեր վիպասանական գրողներից ամենից աւելի հռչակուածը, երբ ոչ ոք այդ չէր սպասում և մենք բժշկի խօսքերից հաւատացել էինք, որ նրա հիւանդութեան ճգնաժամը անցել է և առողջանալու վրայ է։

Մի երկու շաբաթ առաջ, հանգուցեալը հիւանդացել էր թոքերի բորբոքումով։ Այդ առթիւ անմիտ լուրեր էին տարածվում, մինչև անգամ թէ Րաֆֆին վախճանուել է. մենք այդ լուրերին հաւատ չընծայեցինք։ Ստուգելով Րաֆֆիի հիւանդութեան մասին տարածուած լուրերը ուրախութեամբ իմացանք, որ բժշկապետ Տէր-Գրիգորեանցի և Գասպարեանցի ջանքով Րաֆֆիի հիւանդութեան վտանգը անցել է և առողջանալու վրայ է։ Այդ չորեքշաբթի գիշեր ապրիլի 20-ին էր։ Հանգուցեալը իրեն լաւ զգալով, ինչպէս պատմում են, զգոյշ չէ կացել, ապրիլի 24-ին դուրս է եկել պատշգամը ծաղիկներին նայելու և մի երկու ժամ դուրսը մնալով իրեն վատ է զգացել։ Այնուհետև սենեակ մտնելը և երեսի վերայ ուշաթափ ընկնելը մէկ է եղել։ Իսկոյն կոչուած բժիշկը ոչինչ չէ կարողացել օգնելու. բանը վերջացած է լինում։

Րաֆֆիի կենսագրութիւնը ուրիշ անգամ կը հրատարակենք, նրա ծննդեան թուի և տեղի մասին աւելի ճիշդ և մանրամասն տեղեկութիւններ հաւաքելուց յետ։

Հանգուցեալը իբրև յայտնի և հռչակուած գրող ունի բաւականին թուով վիպասանական և այլ արձակ և ոտանաւոր գրուածքներ, որոնք հրապարակի վերայ են դրած և ընթերցող հասարակութեանը մեծ մասամբ ծանօթ են։

Րաֆֆիի մահուան լուրը առնելով անշուշտ ամեն տեղ պիտի ցաւին։ Մեռնողի համար մենք միայն ցաւակցութիւն կարող ենք յայտնել, աւելին մեր ոյժից վեր է. այդպիսի դէպքերում մենք պէտք է հաշտուենք մահուան հետ և յիշենք հանգուցեալի բարի յիշատակը։

Հանգուցեալը մեր գրականութեան անխոնջ և բեղմնաւոր մշակ էր։ Զգելով նա հայ գրողի համար այս քաղցր և միանգամայն բազմաչարչար աշխարհը, նա թողնում է մի թանգահին ժառանգութիւն ազգին —իւր երկերը, իւր գործերը։ Նոր սերունդը, վիպասանական ճանապարհը ընտրողները կարող են հանգուցեալի երկերից, գործերից լիուլի օգտուիլ, նրա լաւ կողմերը իրենց օրինակ առնելով, նրանց թիւր կողմերից զգուշանալով։

Իսկ այժմս թողնենք ամեն բան և գնանք մեր վերջին յարգանքը տալու հայ յայտնի գրողի յիշատակին։ Մեռաւ Րաֆֆին, կեցցէ նրա բարի յիշատակը, կեցցէ հայ գրականութիւնը։

ՔՐՈՆԻԿՈՆ

Երեքշաբթի, ապրիլի 27-ի երեկոյեան դէմ Թերթիս խմբագիրը խմբագրութեանս բոլոր անդամների և ներկայ եղող աշխատակիցների ուղեկցութեամբ, հրաւիրելով և մի քահանայ, ուղևորեցաւ հանգուցեալ Րաֆֆիի բնակարանը՝ նրա վերայ հոգոց ասելու համար, որից յետոյ Թերթիս խմբագիրը մօտենալով սան տիկնոջը՝ յայտնեց նրան իւր և խմբագրութեան կողմից վշտակցութիւն տարած կորուստի համար։

—

«Նոր-Դար»-ի ընթերցողներին արդէն յայտնի է Ղազախից մեր ստացած մի քանի թղթակցութիւններից, որ Եւիսավետօպօլի նահանգական դատարանի բաժինը ուղևորելով Ղազախ, քննեց այնտեղի գործերը։ Այժմ մենք հաստատապէս տեղեկացանք, որ ապրիլ ամսուայ ընթացքում այդ դատարանը դատապարտել է 55 հոգի տաժանակիր աշխատանքի հանքերում, 13 հոգի Սիբիրի հեռաւոր կողմերը աքսորի, 25 հոգի արեստանտայն ըստա կոչուած ուղղիչ գունդը, 15 հոգի բանտարկութեան՝ զրկելով նրանց բոլոր իրաւունքներից և 10 հոգի էլ բանտարկութեան՝ առանց իրաւունքներից զրկելու։ Ընդամենը 118 հոգի։

—

ԴԵՐԲԷՆԴԻՑ.—Այս օրերս մի սարսափելի դէպք գրաւեց ժողովրդի ուշադրութիւնը։ Մի բաւական ունևոր մարդ՝ Յովսէփ Միսկինեան ազգանունով, որ Թուականիս բարեկենդաններին ամուսնացել էր տեղիս նոյնպէս անուանի ընտանիքին պատկանող աղջկայ հետ, բաղնիք գնալուց յետոյ՝ մրսում է և ընկնում է անկողին թոքային բորբոքումով։ Սակայն, հոգեկան ամենածանր րոպէին, կորցնելով իրեն, հանում է բարձի տակից ատրճանակը և ուղղելով դէպի բերանը, գնդակը անցնում է ուղեղի միջով և րոպէապէս մահացնում է իրեն, թողնելով իւր մատղաշ կնոջը անմխիթար դրութեան մէջ։ Բժիշկների վկայութիւնը ստանալուց յետոյ, հոգևոր իշխանութեան կարգադրութեան համաձայն թաղվում է եկեղեցական օրէնքով։

—Պ. Սերգէյ Միսկինեանցը, յարգելով իւր եղբայր՝ հանգուցեալ Յովսէփի յիշատակը, տեղիս Ամենափրկիչ հայոց եկեղեցուն նուիրեց 4 հատ առաջին սէրիայ 5% ներքին խաղարկութեան տոմսակներ այն պայմանով, որ 1) այդ տոմսակները չծախուին. 2) տոկոսը յատկացնել տեղիս հայոց ուսումնարանին և 3) եթէ այդ տոմսակներից մէկնումէկը խաղարկութեան ժամանակ տանելու լինի մի գումար, այդ գումարը գործ դնել եկեղեցու, հայոց ուսումնարանի և հայ երիտասարդների յուսաւորութեան համար... ի հարկէ նայելով տարած գումարի քանակութեանը։ Վերջին կէտի տնօրինութիւնը յանձնուած է տեղիս գործակալ քահանային, Ամենափրկիչ եկեղեցւոյ երէցփոխին, Միսկինեան ընտանիքից մինին և վերջինների ընտրած քաղաքիս պատուաւոր մարդկանցից երեքին։ Յիշեալ խաղարկութեան 4 տոմսակը ներկայ կուրսով արժէն 1070 րուբլի։

—

Կ. Պօլսի Թերթերում կարդում ենք.—Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ «Հայկական քանի մը տառերու հնչումը ճշդելու համար կազմուած Յանձնաժողովոյ» երրորդ նիստը։ Բացակայ էր միայն Գեր. Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց։

Սոյն նստի մէջ կրկնուեցան արդէն յայտնուած կարծիքներն։ Արարատեան հնչման կողմնակիցներն էին, ըստ էս անցեալ նիստերուն ևս, բացի Մ. էֆ. Գարագաշեանէ և Արժ. Յովհաննէս քահանայ Հիւնքեարպէյէնտեանէ, ժողովոյ միւս բոլոր անդամներն։ Ուսումնական Խորհրդոյ ատենապետ Տօքթ. Թիւթիւնճեան էֆ. փափաք յայտնեց որ ժողովը վերջնական եզրակացութեան մը յանգի այս նիստին մէջ։ Բայց որովհետև ժողովոյ բոլոր անդամք համակարծիք չէին, ուստի Պ. Գր. Նիկողոսեան յայտնեց թէ այս խնդրոյ լուծումն աւելի կշիռ և հեղինակութիւն կունենայ, եթէ Յանձնաժողովն՝ իւր վերջնական եզրակացութեան յանգելէ առաջ՝ սոյն խնդիրը ներկայացնէ ազգային բոլոր գիտնական հաստատութեանց, որպէս Էջմիածնայ, Երուսաղեմայ, Վենետիկի և Վիեննայի միաբանութեանց, Էջմիածնայ Գէորգեան ճեմարանին, Մոսկուայի Լազարեան ճեմարանին, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցին, և ականաւոր հայագիտաց՝ որպէս են Էմին, Պատկանեան, Այտընեան, Ալիշան, Մինաս Փօրթուգալեան, Յովհաննէս Սագըզ Լըն Լըն, նոյնպէս և լրագրաց միջոցաւ խնդրէ բոլոր գաւառահայ բանասէրներէն, որպէս զի բարեհաճին Ուսումնական Խորհրդոյն ուղարկել իրենց երկիրներու հասարակ ժողովրդեան բուն հնչումները, փոխադարձ լատինական տառերով։

Սոյն առաջարկութիւն ընդունուեցաւ մեծամասնութեան կողմէն և որոշուեցաւ առանձին գրութեամբ հաղորդել զայն Ուսումնական Խորհրդոյ։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ. — Այս տարի մեծ պասի կիւրակի օրերը Սրբազան Սուրէնեանը փոխ առ փոխ քարոզում էր սուրբ Աստուածածին և սուրբ Պօղոս Պետրոս եկեղեցիներում, ուր ժողովում էր մեծ բազմութիւն։ Միթէ հարկաւոր է ասել, որ ժողովուրդը խիստ գոհ էր։

—Գեր. Սրբազան Սուրէնեանը կարգադրել է Ննջեցեալների հացկերոյթը վերջացնել և տնօրինել է, որ իւրաքանչիւր ննջեցեալի տէր հացկերոյթի ծախսի տեղ մի գումար նուիրէ ազգային որ և է հաստատութիւններին. նուէրը բաժանելու են 5 մասն, որի 2/5 մասն երկսեռ հոգևոր դպրոցներին, 2/5 մասն ազգային աղքատանոցին և 1/5 մասն թեմի հոգևորականաց որբոց և այրեաց գանձարանին։ Այս տնօրինութեան մասին Սրբազան Հօր առաջադրութիւնը լսելով ծխականների ընդհանուր ժողովը, համակրութեամբ ընդունեց վերոյիշեալ օգտաւէտ տնօրինութիւնը։

—

Անցեալները Թիֆլիսի պօստային կօնտօրը, պօստային շրջանի կառավարչի թոյլտուութեամբ Թիֆլիսի մաքսատուն ուղարկեց Շուշից ստացուած 10 հատ ծրարներ, որոնց մասին կասկած էր ծագել, թէ դրանք մաքսանենգ ապրանքներ պէտք է լինին։ Մաքսատանը փաթեթները քննելուց յետոյ երևաց, որ նրանց մէջ կայ 17 ստուգ մաքսանենգ թէյ, շատ լաւ տեսակից և տոպրակների մէջ ածած։ Բացի այդ, երբ մաքսատան ծառայողները սկսան քննել տոպրակով թէյերը տեսան, որ նրանց մէջ փաթաթած են անգլիական, կարեմէքենաների ասեղներ, մօտ 27 ֆունտ, որոնք, «Кав.»-ի ասելով, գործարանային փաթեթով է եղել դեռ։

—

ԴԵՐԲԷՆԴԻՑ.—Թէև ապրիլի վերջն է, բայց սաստիկ քամիներ են լինում։ Ծովը ալեկոծուած է և շոգենաւերը ափին չեն մօտենում։ Եթէ մեզ հասած լուրերին հաւատալու լինինք, այս փոթորիկների ժամանակ բաւականաչափ առագաստաւոր բեռնակիր նաւեր փշացել են ծովի վերայ։

—

Անցեալները Ա. քհ. Աղիզեանը, միզադրուելով Հնդկաստանում թողած Օրբէլեանների կտակած գումարը ստանալու համար 1803—1805 թուականների կեղծ թղթեր պատրաստելուն համար, ձերբակալուած էր, բայց այժմ «Тиф. Лист.»-ը հաղորդում է, որ յիշեալ քահանան արձակուած է բանտարկութիւնից ոմն Կերամիձէի երաշխաւորութեամբ։

—

Ստացանք մեր նշանաւոր վիպասան Պերճ Պռօշեանցի «Սօս և Վարդիթեր» վիպասանութիւնը երկրորդ տպագրութեամբ մաքուր թղթի վերայ և մաքուր էլ տիպով։ Այս վիպասանութիւնը պ. Պռօշեանցը հրատարակել էր սրանից ուղիղ 28 տարի առաջ, 1860 թուին։ Ահագին ժամանակներ անցան, ահագին փոփոխութիւններ մտան «Սօս և Վարդիթերի» հայրենիքում, բայց «Սօս և Վարդիթերը» այսօր էլ կարդացվում է մեծ զուարճութեամբ և բաւականութեամբ, այսօր էլ նրանք մեր գրականական հորիզոնի վերայ մնում են իրենց անարատութեամբ և բոլոր պարզութեամբ։ Յոյս ունինք, որ հայ հասարակութիւնը սիրով կը գնէ այդ վէպը և կը կարդայ նրան։ Գիրքը բաղկացած է 352 մեծադիր երեսներից և գինն էլ թանկ չէ՝—մի րուբլի յիսուն կոպէկ է։ Գրքի տպագրութիւնը սկսուել է 1887 թ. Երևանում՝ Էմին Տէր-Գրիգորեանցի տպարանում, իսկ վերջացել է 1888 թուին Թիֆլիսում Մովսէս Վարդանեանի տպարանում։

—

ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻՑ. — Մենք երեք քահանաներ ունինք, որոնցից մինը շատ տարիներ ամենայն ջերմեռանդութեամբ և արիաջանութեամբ վարել է իւր պաշտօնը, իսկ այժմ ծերութեան պատճառով հրաժարած է պատարագ մատուցանելուց, և բազմաթիւ գիւղերը շրջագայելուց։ Երկրորդը ուղեղի հիւանդութիւն ստանալով ցաւալի դրութեան մէջ է. մնում է երրորդ քահանան, որ դասատու է ծխական դպրոցում կրօնից և բարեկարգ. այս պաշտօններով հանդերձ ի հարկէ չէ կարող բացի քաղաքից, գիւղերն էլ շրջակայել։ Այս պատճառով թեմիս արժանարժանոր առաջնորդ սրբազան Սուրէնեանցը ժողովրդեան խնդիրը ստանալով, անյապաղ նշանակում է Վլադիկովկասից մի քահանայ, գիւղերը շրջագայելու համար ժամանակեայ և ոչ թէ տեղափոխել են քահանային, ինչպէս Վլադիկովկասից հաղորդում է պ. լրատու պատուական «Նոր-Դար»-ի 48 համարում։

—

Տեղական ռուս թերթերում կարդում ենք, որ պ. Սալամբէկեանցը հրաւիրուած է Էջմիածին, Էջմիածնի վանքի և վանական բոլոր շինութիւնների վերանորոգութեան ձեռնարկելու համար։ Այդ թերթերի ասելով, Էջմիածնի վանքը պէտք է պահպանէ իւր նախկին ոճը, միայն քարէ տանիքը պէտք է փոխուի ժեշտի։ Վերանորոգութիւնները պէտք է լինին մօտաւորապէս 15 տարուայ ընթացքում։

—

Թիֆլիսի Քաղաքային վարչութիւնը դեռ բաւական առաջ բարձրացրել էր Ղորղանեանի Չրմուղն էլ քաղաքի հաշուին առնելու խնդիրը։ Ինչպէս երևում է, այդ խնդիրը մօտենում է իւր լուծման, որովհետև, ինչպէս «Кав.»ը լսել է, Թաղ. Վարչութիւնն առաջարկում է այդ Ջրմուղի համար 200,000 րուբլի, միայն այն պայմանով, որ այդ գումարը վճարէ մաս առ մաս՝ 10—20 հազար րուբլի տարեկան։

—

Գարնան հետ Ճանապարհներն էլ բացուելով, գաղթականութեան գործը հեշտացնում են. աղքատ գիւղացիներից, որոնք դեռ նոր ազատուած ձմեռուայ տառապանքներից, աշխատում են շուտով փախչել իրենց հայրենիքից, որպէս զի մի փոքր հանգիստ գտնեն օտար երկիրներում։ Այսպէս օրինակ, անցեալները Սարատովի նահանգից մօտ 45 հոգի ռուս գիւղացի գաղթականներ եկել էին Թիֆլիս, որտեղից պիտի ուղևորէին Սարիղամիշ. գաղթականները 12 ընտանիք էին կազմում։

—

ԴԵՐԲԵՆԴԻՑ.—Այս օրերս 120,000 աստիճան (գրադուս) սպիրտ 40 տակառով արտահանուեցաւ Ռուսիա։ Յիշեալ սպիրտը ծախուած է 12,000 րուբլիով, որից իբրև ակցիզային տուրք 4,800 րուբլի յատկացնուելու է տէրութեանը։

— Թեմիս սրբազան առաջնորդ Մեսրովբ արքեպիսկոպոսի տեղը ժամանելը սպասվում է Զատկից յետոյ։

—

Պետական կալուածների մինիստրութեան Կովկասի կառավարիչ Տիխեևի կարգադրութեամբ ահա քանի ժամանակ է, որ առանձին գրքերով հրատարակւում են Կովկասի որոշ շրջանների կամ նահանգների պետական գիւղացիների մանրամասն ուսումնասիրութիւնները։ Մինչև այժմ հրատարակուած էր երկու հատոր, իսկ մօտերքս էլ հրատարակուեց երրորդ հատորը, որ երեք բաժնից է կազմուած և բովանդակում են ա. «Անդրկովկասի պետական գիւղացիների յարաբերութիւնը դէպի արքունի անտառները», բ. «Գիւղական համայնքը Ելիսավետպօլի և Բագուի նահանգներում» և գ. «Անդրկովկասի Թափառականները» յօդուածները։

—

Տաս տարուց աւելի է, որ խօսվում է Թիֆլիսի փողոցները էլէքտրական լուսով լուսաւորելու մասին, բայց մինչև օրս այդ ուղղութեամբ ոչ մի նշանաւոր քայլ չէ եղած։ Այդ խնդրից յետոյ էր, որ բարձրացաւ Թաղ. Ջրմուղի խնդիրը և նա արդէն լուծուած վերջացած է։ Բայց վերջի ժամանակներս աւելի և աւելի յաճախ են լսվում ձայներ էլէքտրական լուսաւորութեան օգտին։ Այսպէս օրինակ, ինչպէս լսվում է, անցեալները Բլանշօ և Ընկ. Թաղ. Խորհրդին ներկայացրել է մի նախագիծ էլէքտրական լուսաւորութեան ցանցերի համար։ Եթէ այդ նախագիծն ընդունուելու լինի, յիշեալ ընկ.-ը առաջարկում է Թաղ. Վարչութեան այժմ կազմել սկզբնական պայմանագիր և ապա ընդարձակ։

—

Մոսկվայի Կայսերական աշխարհագրական ընկերութեան ընդհանուր ժողովում գրաֆուհի Ուվարովա հաղորդել է ընկերութեան անդամներին, որ Թագաւոր Կայսրը հաճել է ընկերութեան շնորհել 10,000 րուբլի Կովկասում և Արևելեան նահանգներում հնագիտական հետախուզութիւնները շարունակելու և այդ հետազօտութիւնների հետևանքները հրատարակելու համար։

—

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրվում Մայիսի 1-ից և վճարում են 7 ր. 25 կոպէկ։ Տարեկան բաժանորդագինը յունվարից սկսած՝ 10 րուբլի է։

—

«Նոր-Դար»-ի առաջիկայ համարը լոյս կը տեսնի ապրիլի 30-ին, շաբաթ օրը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԵՐԲԵՆԴ, 10 ապրիլի.—Չորս ամիս է, որ տեղիս հայ ժողովուրդը զբաղուած է երէցփոխանական հարցով։ Դեռ անցեալ ամիսներում Թեմիս սրբազան առաջնորդից ստացուած է մի գրութիւն, որով պատուիրում է հանգուցեալ երէցփոխի փոխարէն նոր ընտրութիւն կայացնել և աշխատել ընտրելու այնպիսի անձնաւորութիւն, որ կարողանայ պայծառացնել և արդիւնաւորել եկեղեցին։ Այնուհետև, նորընտիր երէցփոխը, պէտք է հաշուի նաև ծխական ուսումնարանի հոգաբարձութեան անդամ, որովհետև եղած հոգաբարձուներից մինը իրեն յարգելի պատճառներով հրաժարական է տուել։

Յիշեալ գրութիւնից պարզ երևում է, որ նորընտիր երէցփոխը, ով և լինի նա, բացի հաւատարիմ, ազնիւ լինելուց, պէտք է նաև գործող և ուսումնարանական գործին տեղեակ լինի, որպէս զի կարողանայ ուսումնարանի անմխիթար դրութեան վերայ հոգալ։ Այդ պատճառով էլ ժողովրդականների առաջ այս անգամ գլուածը ծանր խնդիր էր։

Այս տարուայ յունվարի 3-ին կայացած ընտրողական ժողովում, պ. Գէորգ Մելիք-Շահնազարեան Դէշպապուը երէցփոխ ընտրուեցաւ. յիշեալ պարոնը արդէն յայտնի էր ժողովրդին իւր երեքամեայ հոգաբարձական և վեցամեայ երէցփոխանական գործունէութեամբ։ Եկաւ պարոնի հաստատութեան և հոգաբարձութեան անդամ ճանաչուելու Թուղթը... սակայն անակնկալ կերպով հիւանդանալով, անկարող գտնուեցաւ ընդունել այդ պաշտօնները և ներկայացրեց իւր հրաժարականը։

Ո՞ւմ պէտք էր ընտրել... ահա այն խօսքերը, որ շրջում էր մարդկանց բերաններում...

Կային այնպիսի մարդիկ (ի հարկէ մեծամասնութիւն), որոնց համար Կիրակոսի ընտրութիւնն այն նշանակութիւնն ունէր, ինչ որ Մարտիրոսի և Զաքէոսինը, միայն թէ ընտրուողը նիւթական կարողութիւն ունենար և մի քիչ էլ հաւատարմութիւն, իսկ թէ կարո՞ղ էր գործել եռանդով, կարո՞ղ էր օգուտ տալ եկեղեցուն, այս բաները ի հարկ է նշանակութիւն չունէին։ Ուսումնարանի մասին ոչինչ չենք ասում, որովհետև ուսումնարան ասած բառը շատ վատ է ներգործում այդպիսիների ջղերի վերայ։

Մինչև անգամ այնպիսի մարդիկ էլ կան, որոնք կը ցանկանային փակել ուսումնարանը, որպէս զի ուսումնարանի մի քանի գրօշներով եկեղեցու համար մի երգեցիկ խումբ պահուէր։ Այս օրինակ մարդիկը, մինչև օրս չեն հասկացել, որ եկեղեցու պայծառութիւնը, որի մէջ է նաև երգեցիկ խմբի ապահովութիւնը, կախուած է ժողովրդականներից, և նրանց սրտից բղխած առատ նուէրներից։ Այն, ինչ որ իրենք պիտի անեն, կամենում են մի այլ հիմնարկութեան հաշուով անել... Բայց ինչի՞ պէտք է զարմանալ... քանի որ այդպիսի մարդիկ երէցփոխանական կանդիդատների մէջ են ընկած։ Մախլմա։

Բայց և կան այնպիսի մարդիկ, որոնք հասկանալով բանի զօրութիւնը և ՚ի նկատի ունենալով ուսումնարանի ներկայ դրութիւնը, աւելի ծանրացնում և լուրջ կերպարանք էին տալիս հարցին՝ թէև փոքրամասնութիւն էին կազմում նրանք։

Մարտի 23-ին կրկին ընտրութիւն էր նշանակուած. այդ օրը ընտրուեցան երեք կանդիդատներ, որոնք և պէտք է քուէարկուէին, սակայն ինչ-ինչ պատճառներով յետաձգուեցաւ քուէարկութիւնը և դրա փոխարէն հանգուցեալ երէցփոխի որդի պ. Ս. Բաբ...ը կարդաց մի քանի մարդկանց ներկայութեամբ իւր հօր "երէցփոխանական երեքամեայ հաշիւը։ Մենք չենք կարող և չենք էլ կամենում մեր դիտողութիւնները անել, որովհետև, ինչպէս ամեն մի հաշիւ, նոյնպէս և այդ հաշիւը, օրինական քննութեան ենթարկուելուց յետոյ կարող է միայն նշանակութիւն ունենալ։ Ընդհանուր հաշուից երևեցաւ, որ երեք տարուան զուտ արդիւնքը, ծախսերը հանած, եղել է մօտ 1000 րուբլի, որի կէսը ուսումնարանի սեփականութիւն է համարվում։ Խորհուրդ ենք տալիս մեր քաղաքացիներին սթափուել և հասկանալ այն, որ տուածը պէտք է պահանջել... մի կողմը թողնել խաթրպահելու և քէֆին չկպչելու պարսկական քաղաքականութիւնը... և հաստատ համոզուած պիտի լինին, որ դա է ազնուութիւնը և ճշմարտութիւնը։

Ապրիլի 3-ին, կիրակի օրը, կայացաւ երրորդ ժողովը, ուր վերջնականապէս քուէարկուեցան 3 կանդիդատները և ձայների բազմութեամբ ընտրուեցաւ պ. Սարգիս Շահնշանեանը։ Ընտրութիւնը աջող էր, որովհետև յիշեալ պարոնը մի ժամանակ մեծ եռանդով վարել է ուսումնարանում հոգաբարձուի պաշտօն։ Առ այժմ ամենայն սրտով աջողութիւն ենք ցանկանում պ. Շահնշանեանցին և յոյս ունինք, որ նա ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ կը գործէ եռանդով և ոչ մի միջոց չի խնայել պայծառացնելու եկեղեցին և նախանձախնդիր լինելու ուսումնարանի բարւոքման։

Ար.

ԲԱԳՈՒ, 17 ապրիլի.—Մի քանի քահանայացուների ձեռնադրութիւնը, որ պիտի տեղի ունենայ մօտերքումս, սաստիկ յուզել է ժողովրդեան լուսամիտ դասին։ Ինչպէս երևում է, մենք չենք կամենում անցեալից խրատուել, բան սովորել...։ Արդէն ընդհանուր մողոք է, ընդհանուր ձայն է բարձրացած տգէտ քահանայացուներին ասպարէզից հեռացնելու մասին ոչ միայն նշանաւոր քաղաքներից, ինչպէս օրինակ և Բագուն է, այլ և գիւղերից, բայց ի՞նչ ենք տեսնում մենք։ Նոյկուայ կօշկակարի Փանտալեան մտել է քահանայանալ մեր գլխին և այսօր էլ նրան այդ աջողվում է առանց արգելքների։ Ինչ է պատճառ գիտէք, ընթերցող, որովհետև նա հարուստ բարեկամներ ու ճարպիկ խորհրդակիցներ ունի։ «Մարդաս. Ընկ.» անդամները բողոքել են ժողովրդեան լուսամիտ դասին հետ ուր հարկն է, բայց ինչպէս երևում է թիւրքական առածը թէ, «Զը, չէքթէն նալչա դը, եւ բիթերէն աքչա դը» արդարանում է։ Ահա երկու օր է ինչ որ առաջնորդն տեղս է. ձայն կայ, որ տիրացուներին պիտի ձեռնադրէ։ Այս լուրը յուզել է ժողովրդի մեծամասնութեանը և նա ցանկանում է վերջին փորձն անել, որպէսզի աջողի արգելք դառնալու ապագայում պատրաստուող պատուհասների համար։ Թէ որքան կ՚աջողուի, դեռ ևս անյայտ է։ Ասում են հարկաւորութիւնը հնարագիտութիւն կը ստեղծէ մեզ համար. հարկաւորութիւն շատ ունինք, բայց դարմանի համար ամենևինէլ հոգս չենք անում։ Բողոքականութիւնը շնորհիւ ճարպիկ ամերիկացոց պրօպագանդան առաջ է մղում, ամեն քայլում, իւրաքանչիւր դիպուածքում կրօնասիրութիւնը սառչում է մեռնում, կրօնը օդն է ցնդվում... բայց, վա՜յ մեզ, ի՞նչ կլինի մեր դրութիւնը, եթէ մեր հոգևոր հայրերը լինեն տգէտներ։ Ո՞վ պէտք է մեր հոգսերին, մեր վէրքերին սպեղանի դնէ։ Կարծում ենք, հոգևորականութեան մենակ մեղադրելով չը պիտի բաւականանանք, այլ ժողովուրդն էլ ժամանակ է որ հասկանայ իւր ցաւը և իւր պէտքերին համեմատ գործէ։

Մենք անչափ ուրախացանք, երբ անցեալներում լսեցինք, թէ բարձրագոյն հոգևոր կառավարութեանից հրամայուած է քահանայութեան ձեռնադրողներին վերաբերմամբ խիստ զգուշութեամբ ընտրութիւններ լինին. բայց այսօր ցաւալի է տեսնել այդ տեսակ անհրաժեշտութեան անտես առնելը։ Միւս կողմից մեզ զարմացնում է քահանայացու պարոնների սառնասրտութիւնը. եթէ այժմ ժողովուրդը բողոքում է իրենց դէմ. ո՞ւմ համար են քահանայանում....

Վար.

ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. ՊՈԼԻՍ, 5 ապրիլի. — Պատրաստութիւններ կը տեսնուին Ս. Պատրիարք հայրը ճանապարհելու դէպ ի Ս. Երուսաղէմ։ Արդէն ազգովին զգացուած էր Նորին Սրբազնութեան յԵրուսաղէմ ներկայութեան հարկը։ Ս. Աթոռոյն Միաբանական ընդհանուր ժողովն ալ Ազգ. Ժողովոյ կը յղէ պատրիարքական Աթոռոյն Թափուր վիճակին նկատմամբ Տեղեկագիր մը, որով մանրամասնաբար նկարագրուելէ յետոյ Վանուց վիճակն, ստիպողաբար կը խնդրուի Ամեն. Յարութիւն Պատրիարքի դարձն յաթոռ Ս. Երուսաղեմի։

Որովհետև Յարութիւն Սրբազանի Երուսաղեմայ պատրիարք ընտրուած ժամանակ, նաև որոշուած էր Երուսաղեմայ Կանոնագրոյն վերաքննութիւնը աւարտելէ յետոյ միայն ընտրութեան Տեղեկագիրը Բ. Դրան մատուցանել, Ազգ. Ժողովն այս շաբթու փութով աւարտեց սոյն կանոնագրոյն վերաքննութիւնն և վերջնապէս ընդունեց զայն. յետոյ վեցի դէմ տասն և եօթն քուէով ընդունեց հետևեալ որոշմնաձևը.

«Ազգային Ժողովը կորոշէ Ամեն. Տ. Յարութիւն Սրբազանի Երուսաղեմայ պատրիարքական ընտրութեան Տեղեկագիրը ստորագրել, և իւր Վարչութեան կը յանձնարարէ ըստ այնմ մղում տալ պաշտօնական գործողութեանց։

«Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան կը մնայ Պատրիարք Կ. Պոլսոյ մինչև որ Կայսերական Իրատէն վաւերացնէ Երուսաղեմայ Պատրիարքական ընտրութիւնն»։

Այժմ ընտրութեան տեղեկագիրը պատրաստուելու վրայ է. յառաջիկայ շաբթու պիտի ստորագրուի Ազգային Երեսփոխաններէն և պիտի մատուցուի Կայսերական Կառավարութեան վաւերացման։

Ցաւս կառավարութեան Յարութիւն Վեհապետեանի ունեցած վարկը նըկատողութեան առնելով, մենք կը կարծենք, որ շատ դիւրութեամբ ձեռք չպիտի կրնայ բերուիլ Կայսերական վաւերացումը։ Վեհ. Սուլթանի կառավարութիւնը տեսաւ, որ Յարութիւն Սրբազան իւր Պոլսոյ պատրիարքական պաշտօնը օգտակար կերպով չվարեց Ազգին և Պետութեան համար։ Արդ, խնդիր է կառավարութեան համար, թէ Յարութիւն Պատրիարք ի՞նչ ընթացք պիտի ունենայ յԵրուսաղէմ։ Այսպիսի հաշիւներ կը կարծեմք, որ պիտի դժուարացնեն Երուսաղեմայ պատրիարքական ընտրութեան վաւերացման գործը։

Քանի որ խօսքս Երուսաղեմայ վրայ է, չմոռնամ արձանագրելու, որ «Արևելք» խապարիկ և պարիկ խմբագիրներէն մին, որ Ազգին դըժբաղդութեանցն աթոռ ունի Ազգային Ժողովոյ մէջ, առանց ամաչելու, եկաւ առաջարկեց Ազգ. Ժողովոյ մէջ, որ բոլորովին փակուի ս. Յակոբեանց աթոռոյն տպարանը, որպէս զի չելնեն օր մ՚ այնտեղ գիրք կամ լրագիր հրատարակելու ձեռնարկեն, ինչպէս ուրիշ անգամներ եղած է այդ։ Առաջարկութեան տէրը, իւր մէկ պաշտօնակցէն առնելով արժանաւոր պատասխանը, չկարողացաւ պնդել իւր առաջարկութեան վրայ։ Ցաւալի է որ, ինչ որ օտարները կաշխատին քանդել մեզ համար ու չեն յաջողիր, մենք հայերս մեր ձեռքով կը ջանանք քանդել։

—

Ժամանակէ մը ի վեր Ազգն զբաղեցնող խնդիրներէն մին ալ Զմիւռնիոյ Թեմի Մաղնիսա քաղաքի Առաջնորդական փոխանորդ (յաջորդ) Արժանապատիւ Յակոբոս վարդապետ Շահպազեանը Պոլիս բերել տալու խնդիրն էր։ Թէև այդ մասին «Նոր-Դար» մի քանի անգամ գրած է արդէն, բայց քանի որ այդ խնդիր Յարութիւն Պատրիարքի հրաժարման պատճառներէն մինն կը նկատուի, աւելորդ չեմ համարիր անգամ մ՚ալ համառօտակի անցնել այդ դէպքի պատմութիւնը։

Քանի ժամանակէ ՚ի վեր Պատրիարքարանը կ՚ուզէր այդ վարդապետը Պոլիս բերել տալ ու պատժել, յօդուած մը հրատարակելու համար։ Եւ Պատրիարքարանը կուզէր ու կը պնդէր որ Շահպազեան Պոլիս ղրկուի Զմիւռնիոյ Առաջնորդին ձեռամբ։ Առաջնորդը կը պատասխանէր Պատրիարքարանի թէ ինքն այդ գործին մէջ սկիզբէն ի վեր չեզոք և անմասն դիրք մը բռնած լինելով, կը շարունակէ պահպանել իւր չեզոքութիւնը, և հետևաբար չէ կարող միջամտել այդ գործին յարակից որևէ խնդրոյ մը մէջ, ինչպէս է Շահպազեանի խնդիրը, չէ կարող միջամտել, քանի որ ինքն է խնդրոյն բուն ենթական։ Հետևաբար ս. Առաջնորդը կը յայտնէր իւր պատասխանագրոյն մէջ թէ, եթէ Պատրիարքարանը Պոլիս բերել տալ կուզէ զՇահպազեան, կարող է ուղղակի իրեն՝ վարդապետին գրել պաշտօնապէս ու կոչել։ Միւս կողմանէ Շահպազեան գիր կը գրէր Պատրիարքարան և կըսէր թէ ինքն պատրաստ է անմիջապէս մեկնելու Մաղնիսայէն յօժարակամ և Պոլիս գալու, եթէ Պատրիարքարանը ուղղակի իրեն դիմէ ու կոչէ։

Պատրիարքարանը կարևորութիւն չէր տար ոչ Զմիւռնիոյ Ամեն. Առաջնորդի արդար առարկութեանց և ոչ Արժ. Շահպազեանի գրերուն, այլ մէկ կողմանէ նամակներ և հեռագիրներ տեղացնելով Զմիւռնիոյ Առաջնորդարանը՝ յամառութեամբ կը պնդէր որ Առաջնորդը անպատճառ Պոլիս ղրկէ զՇահպազեան, և միշտ նոյն պատասխանը կ՚ընդունէր, միւս կողմանէ զԱռաջնորդ Սրբազանն Ազգային իշխանութեան դէմ ըմբոստ հրատարակել կուտար տեղւոյս թերթի մը մէջ։

Այս անյաջող փորձերէն Պատրիարքարանը տեսնելով որ չպիտի կարողանայ զՇահպազեան իւր ներքին նըպատակից յարմար կերպով Պոլիս բերել տալ, և միւս կողմանէ, իւր սխալն ուղղած չլինելու համար, չը զիջանելով ուղղակի Շահպազեանի գրել, Թագրիր մը կը գրէ Կայսերական Կառավարութեան՝ պահանջելով որ Շահպազեան վարդապետ բռնի Պոլիս բերել տրուի ընդ հսկողութեամբ և յանձնուի Պատրիարքարանի։ Բաբենում կառավարութիւնը շատ երևամբ անգործադրելի կը թողու Պատրիարքի Թագրերը՝ առարկելով թէ Պատրիարքարանը անիրաւ է այս խնդրոյ մէջ, վասն զի Շահպազեան վարդապետ իւր կոչման համապատասխանող ընթացք մ'ունեցած. Պատրիարքարանը կը շարունակէ ձեռնարկներ ընել Բ. Դրան մօտ, որպէս զի համոզէ և բերել տայ զՇահպազեան, բայց ի զուր ջանք, անօգուտ վաստակ. Պատրիարքարանը այս անգամ եւս անյաջողութեան կը մատնուի և իւր վրայ կը խնդացնէ Շահպազեանի համակիր ամբողջ կուսակցութիւն մը։

Վերջապէս ճարահատեալ և յուսահատ, կը գայլանայ մեր Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը, և հրաժարական կը մատուցանէ կայսերական կառավարութեան, իւր հրաժարման իբրև գլխաւոր պատճառներէն մին ներկայացնելով նաև Շահպազեանի խնդիրը։ Այստեղ, Յարութիւն Պատրիարքն ու զինքը շրջապատող խելացի Դաւիթները աւելի ծիծաղելի կը դառնային, վասն զի ահագին Յարութիւն պատրիարք մը չարաչար յաղթահարուելով աննշան Շահպազեան վարդապետի մը դէմ մղած անհաւասար պատերազմի մը մէջ, չափէն շատ աւելի կը բարձրացնէր զՇահպազեան՝ պատրիարքական հրաժարման պատճառ մը լինելու պատուոյն արժանացնելով զնա։

Բ. Դուռը Ս. Պատրիարքին կը պատասխանէ արդար առարկութիւններով և ապացուցութեամբ թէ պատճառաբանեալ հրաժարականի մէջ նշանակուած պատճառներն անտեղի, անհիմն և անարժէք են, և հետևաբար պատճառ չեն հրաժարման, ուստի և կը մնայ իրեն ետ առնուլ իւր հրաժարականը և անցնիլ իւր պաշտօնին գլուխը։ Յարութիւն Պատրիարքը կը պնդէ իւր հրաժարականին վրայ ու կը դառնայ Երուսաղեմատուն։ Մէկ երկու շաբաթ այնտեղ առանձնացեալ և հրաժարեալ մնալէ յետոյ, օր մը յանկարծ՝ առանց մէկէ մը խնդրուելու՝ ինքն իրեն ետ կ'առնու իւր հրաժարականը և կուգայ կը բազմի իւր պատրիարքական աթոռը։ Շահպազեանի խնդիրը կը մնայ միշտ անլոյծ. Շահպազեան կը շարունակէ միշտ իւր պաշտօնը ի Մաղնիսա։

Երբ այսպէս Պատրիարքարանը բոլորովին յուսահատած էր Շահպազեանի խնդրոյն մէջ որ և է յաջողութիւն մ'ունենալէ, և երկու երեք ամիսէ ի վեր ձայնը բոլորովին քաշած ու խնդիրը մոռացութեան տուած էր, Շահպազեան վարդապետ ինքն անձամբ անակնկալ կերպիւ կը լուծէ այս կնճռոտ, բայց իրապէս շատ պարզ խնդիրն՝ գրեթէ յանկարծ երևալով ի Պօլիս։ Շաբաթ օրը միայն կը լսուի այստեղ թէ Շահպազեան Պօլիս կուգայ, և ահա այս առաւօտ, երկուշաբթի, կը մտնէ մայրաքաղաքս, և դիմաւորուելով բարեկամներէ, պատուով կ'առաջնորդուի ուղղակի ի Պէշիկ-Թաշ, ուր կը հիւրընկալուի Գաղանճեան Մեծ. Յակոբ աղայի տան մէջ։

«Արևելք» իւր սովորութեան համեմատ, այս պարզ լուրն ալ սուտախառն կը հրատարակէ։ Շաբաթ օրը կը գրէր թէ՝ Շահպազեան Պօլիս կը բերուի ոստիկանական հսկողութեան ներքև։ Սուտ։ Այսօր ալ կը գրէ թէ՝ Շահպազեան Պօլիս եկած և ուղղակի Գատը-Գիւղ (մօտ Գըզըլ-Թօփրագի) գացած է։ Այս ալ սուտ։

Եւ «Արևելքի» մէջ հրատարակուած ո՛ր ազգային լուրը սուտ կամ սուտախառն չէ, որ այս ուղիղ լինի։

Շահպազեանի եկած շոգենաւով Պօլիս ժամանեցին նաև Զմիւռնիացի Սպարթալեան եղբայրք Թագւոր և Տիգրան էֆէնտիք, որոց անունը ծանօթ պէտք է լինի ռուսահայոց ևս, իբրև ազգային բարերարաց արժանաւոր ժառանգորդք։

Գարեգին

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԻԱ.—Այն լուրերը, թէ գեներալ Բուլանժէն դրամական մեծ նպաստներ է ստանում բոնապարտականներից, քանի գնում աւելի և աւելի հաստատւում են։ Այդ առթիւ նոյն իսկ բուլանժականների մէջ էլ տարաձայնութիւններ են ծագել։ Բուլանժէի դէմ բողոքները աւելի և աւելի բարձրաձայն են լսվում։ Մինչև անգամ ուրիշ երկիրներից բողոքում են նրա վարմունքի դէմ. այսպէս օրինակ, անցեալ օրեր Հռոմի ուսանողները խմբովին համակրական հեռագիրներ են ուղարկել Պարիզի ուսանողներին՝ Բուլանժէի դէմ նրանց արած ցոյցերի համար։

—Ֆրանսիայի զինուորական նոր մինիստր Ֆրէյսինէն պաշտպանում է այժմ մի նոր զինուորական օրէնք, որով պէտք է Ֆրանսիական զօրքը աւելանայ և իւր երկար ճառը վերջացրեց նրանով, որ ասաց, թէ «մեր հարևան ազգը (Գերմանիան) ասած «մենք կամենում ենք մեր երկու սահմանների վերայ ունենալ մի-մի միլիոն զօրք և մի միլիոն էլ երկրի ներսում»։ Ֆրանսիացիներին սրանից յետոյ մնում է միայն հետևել այդ ազգի օրինակին և նոյնը ցանկանալ մեզ համար էլ»։ Այսպէսով ուրեմն մի առ ժամանակ դադարած զինման ձայները կրկին սկսան աւելի և աւելի լսուել։

ԳԵՐՄԱՆԻԱ.—Կան թերթեր, որոնք չեն քաշվում ամեն բանի մէջ շահասիրութիւն, սև փառասիրութիւն տեսնելու. դրանք իշ. Բիսմարկին էլ մեղադրում են, իբր մի մարդի, որ ամեն միջոց գործ է դնում իւր պաշտօնը չկորցնելու համար։ Սակայն վերջերս պատահած մի դէպք ամենևին չէ ցոյց տալիս այդ։ Ֆրիդրիխ կայսրը ցանկանում է իշ. Բիսմարկին բարձրացնել դքսութեան, իսկ նրա որդիներին էլ շնորհել իշխանական տիտղոս, բայց իշ. Բիսմարկը մերժում է, չէ ընդունում այդ պատիւը։

—Թէև հեռագիրը մեզ չհաղորդեց, բայց սակաւ նշանակութիւն ունեցող հանգամանք չէ այն, որ իշ. Բիսմարկի որդին Հերբերտ Բիսմարկը նշանակուած է մինիստր, որի մասին Ֆրիդրիխ կայսրը ցանկանում է իշ. Բիսմարկին բարձրացնել դքսութեան, իսկ նրա որդիներին էլ շնորհել իշխանական տիտղոս, բայց իշ. Բիսմարկը մերժում է, չէ ընդունում այդ պատիւը։

ԱՒՍՏՐԻԱ-ՈՒՆԳԱՐԻԱ. — Բավարիայում հրատարակուող «Fränkisches Volksblatt»-ը լուր է տարածել, որ Աւստրիա-Ունգարիան պատերազմական դաշն է կապել Բավարիայի հետ, թերթի ասելով, Բերլինի պալատական շրջանի գիտութեամբ, որի զօրութեամբ բավարական զօրքերը պէտք է շարժուին դէպի Վիեննա, եթէ Աւստրիա-գերմանական սահմաններին վտանգ կը սպառնայ արևելեան կողմից. այդպիսի դէպքում բավարական բանակի ծախսը կը տանէ Աւստրիան։

ԹԻՒՐՔԻԱ.—Մակեդոնիայում եղելի դրութիւնը մի այնքան էլ մեծ հանգստութիւն յուսալ չեն տալիս։ Կ. Պօլսի թիւրքական կառավարութեան ուշադրութիւնը դարձրել է Մակեդոնիայում անգլիական կառավարութեան գործած խարդաւանքների վերայ։

—Թիւրքական վարչական մարմինները բռնել են յունական «Կասանդր» շոգենաւը։ Յայտնի չէ պատճառը։

ԱՆԳԼԻԱ.—Արդէն վաղուց է խօսվում է, որ Անգլիան էլ մտադիր է միանալու միջին-եւրոպական երեք պետութիւնների դաշնակցութեան, սակայն մինչև այժմ ոչ մի այնպիսի քայլ չէ արել Անգլիան, որից կարողանայինք եզրակացնել, որ նա ցանկութիւն ունի միանալու այդ եռապետական դաշնակցութեան։ Սակայն անգլիական Վիկտորիա թագուհու Գերմանիա գալը կրկին առիթ է տուել լրագրութեան բարձրացնելու այդ խնդիրը և յոյս ունին, որ այս անգամ արդէն Անգլիան կը միանայ եռապետական դաշնակցութեան։

ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Կ. Պօլսում Բուլղարիայից ստացուած լուրերին նայելով, Տըրնովոյում ոստիկանութեան և ժողովուրդի մէջ կռիւ է պատահել։

—Բուլղարական ընդիմադիր կուսակցութեան օրգանները դադարել են գոյութիւն ունենալուց։

— Ստոյանովը ստորագրութիւն է հաւաքում հանրագրութեան համար, որով պրինց Ֆերդինանդին խնդրում են ստանձնելու բուլղարական թագաւորի կոչումը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Ֆրանսիական ճեմարանը իւր մրցանակներից մինը պարգևել է Ռումինիայի թագուհուն, (որ յայտնի է Կարմէն Սիլվա կեղծ անունով) նրա «Pensée d'une reine» վերնագիրը կրող գրքի համար։ Թագուհուն մրցանակը տալիս են ոչ թէ փողի, այլ երեք մեդալների ձևով մինը ոսկէ, երկրորդը արծաթէ և երրորդը պղնձէ, որոնց ճեմարանը յատկապէս պատուիրել է ի պատիւ թագուհուն և նրանց վերայ փորագրուած է նրա հեղինակութեան անունն ու տարեթիւը (1888 թ.)։

*** Վիլհէլմ կայսրի թողած 24 միլիոնից երեք միլիոն կտակած է Աւգուստա կայսրուհուն, մի միլիոն Բադէնի մեծ դքսուհուն, մի-մի միլիոն թագաժառանգ Վիլհէլմին և նրա ամուսին Վիկտորիա- Աւգուստինին, պրինց Հէյնրիխին մի միլիոն և նրա համար գնուած պալատը։ Արքունի գանձարանին թողել է 12 միլիոն։ Մնացածը պէտք է բաժանուի հեռաւոր ազգականների մէջ։

*** Ֆիլիպեան կղզում եղած Սան-Ֆերնանդօ քաղաքը բոլորովին ոչնչացել է հրդեհից։

*** Առաջիկայ հոկտեմբերի 9-ից մինչև 30-ը յունական Գէորգ թագաւորի 25 ամեայ յոբելեանի առթիւ Աթէնքում պիտի կայանայ գեղարուեստա-արդիւնաբերական և գիտական ցուցահանդէս, ուր պիտի կատարուին և մրցումներ ու խաղեր, որոնք պէտք է յիշեցնեն հին ոլիմպեան խաղերը։ Այս ցուցահանդէսին թոյլ են տրվում և ուրիշ պետութիւնների արդիւնաբերութիւնները։

*** Բրիտանական մուզէումն ունի մօտ 3 միլիոն գիրք և տպուած երեր. ամեն տարի նա աւելանում է 80,000 հատորով։ Նրա գրացուցակի տպագրութիւնը սկսուած է դեռ 1884 թուին և բռնած է 138 հատոր. մինչև այդ գրացուցակի տպագրութեան աւարտելը առնուազն պէտք է 16 տարի անցնի։

*** Անգլիական թերթերը պատմում են, որ հարուստ կալուածատէր Աշխտոն Սմիթը ի յիշատակ անգլիական Վիկտորիա թագուհու 50 ամեայ յոբելեանին մի ահագին զառիվայրի վերայ տնկել է 630,000 թուփեր, որոնք այնպէս են դասաւորած, որ հեռուից կարդում են «Iubilee 1887» բառերը։ Այդ բառերի ամեն մինը բռնում է 200 եարդ տեղ երկարութեամբ և 25 փուտ լայնութեամբ։

*** «Times»-ի թղթակիցը Րիօ-դօ-Ժանէյրօից հաղորդում է մի լուր առնելով տեղական լրագիրներից, թէ կառավարութիւնը թոյլատրել է 3,800 հնդիկներ։

*** Յարգուած երգչուհուն ընծայ տալու համար գտել են մի շատ գեղեցիկ միջոց։ Բարցելոնում կատարվում էր նշանաւոր երգչուհի Բօրէլի բենէֆիսը։ Յանկարծ օթեակներից բեմի վերայ թռան մի քանի աղաւնիներ և շնորհալի կերպով դերասանուհուն մատուցին զանազան թանկագին ընծաներ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 20 Ապրիլ.—Առաւօտեան ժամը 9-ին կազմած բիւլետէնում ասուած է, որ կայսրը գիշերը լաւ անցկացրեց և իրեն էլ լաւ է զգում. տենդը թուլացաւ։

Կ. ՊՕԼԻՍ. — Այստեղ ապրող սերբերը խիստ յուզուեցան Բելգրադում կատարուող մինիստրութեան փոփոխութեամբ և մտադիր են Միլան թագաւորին դիմելու բողոքով։

ԱԹԷՆՔ.—Կ. Պօլսից ստացուած նամակներին նայելով, տիեզերական պատրիարքը մտադիր է, իբրև թէ, սինոդի հետ իւր պաշտօնից հրաժարուելու, եթէ Բ. Դուռը չի վերականգնիլ Մակեդոնիայի պաշտօնազուրկ միտրապոլիտների իրենց նախկին իրաւունքները։ Պատրիարքը յայտարարում է, որ Բ. Դուռը արգելք է լինում եկեղեցուն կատարելու իւր կոչումը։

ՎԻԵՆՆԱ.—Հաագից ստացուած լուրերին նայելով, հօլանդական թագաւորի առողջութիւնը անյուսալի է։

ՊԱՐԻԶ.—Վերակազմուած հայրենասիրական միութիւնը պահանջում է Գերմանիայի հետ խաղաղ պայմանագրի վերաքննութիւնը և Էլզաս - Լոթարինգիայի ազատութիւնը։

ՂԱՐՍ-ԽՈՒՐՋԱՆ.—Սամարղանդի երկաթուղու գծի մօտակայ աւարտումը տեղական բամբակագործներին դրդեց այս տարի ամերիկական սերմից երկու անգամ աւելի բամբակ ցանել քան անցեալ տարի։ Սակայն ոչ մի տեղ դեռ բամբակ չեն ցանում անդադար տեղացող անձրևների և սովորականից դուրս ցրտերի պատճառով ամբողջ Թուրքեստանում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Անցաթղթերը անցաթղթային գրքոյկների 10 տարի ժամանակով փոխարինելու մասին լուրը հաստատվում է։ Այդ խնդիրը պիտի քննուի պետական խորհրդի ներկայ նիստերում։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ պետական խորհուրդը հաստատեց առևտրական նաւահանգիստներ շինելու նախագիծը։ Առևտրական բոլոր նաւահանգիստները բաժանվում են երեք կարգի։ Փոքր նաւահանգիստները ենթարկվում են առաջնակարգ նաւահանգստային շրջանին։ Պատերազմական նաւահանգիստներին կից կամ նրանց մօտ եղող առևտրական նաւահանգիստները ենթարկվում են պատերազմական նաւահանգիստների բոլոր օրինաւոր պահանջներին։ Առևտրական նաւահանգիստների կառավարիչներ նշանակվում են նաւատորմղի սպաներից կամ կորպուսային շտուրմաններից։

«Нов.»-ն հաղորդում է, որ Պետերբուրգի սլավեանական ընկերութեան նախագահ գրաֆ Իգնատիեվը իւր վերայ է առել Ռուսիայի մկրտութեան ինն հարիւրամեակի տօնախմբութեան բոլոր պատրաստութիւնները։

Նոյն լրագիրը հաղորդում է, որ մայիսի 4-ին Պետերբուրգում կայանալու է առաջին խումբ երկաթուղիների ներկայացուցիչների համաժողով, իսկ մայիսի վերջին կամ յունիսի սկիզբներին—Մոսկվայում կը կայանայ կօնֆերէնցիա միջազգային հաղորդակցութեան մասնակցող երկաթուղիների ներկայացուցիչների։

ՊԱՐԻԶ.—Դերուլէդը, «Temps»-ին ուղղած մի նամակում յայտարարում է, որ ներքին դժուարին դրութեան պատճառով հայրենասիրական միութիւնն առ ժամանակ ձեռնպահ է մնալու արտաքին քաղաքականութեամբ պարապելուց։

ԲԵԼԳՐԱԴ.—Օտար պետութիւնների մօտ եղած սերբիական դեսպաններին ուղարկած շրջաբերականի մէջ սերբիական արտաքին գործերի մինիստրը պարզում է կառավարութեան նախագիծը և յայտարարում է, որ կառավարութիւնը կանգնած է կուսակցութիւնից բարձր՝ իւրաքանչիւրին թողնելով ազատ գործել օրէնքի շրջանում։ Իսկ ինչ վերաբերում է արտաքին քաղաքականութեան, կառավարութիւնը պիտի աշխատի բոլոր պետութիւնների հետ լաւ յարաբերութիւններ պահպանելու յօգուտ Սերբիայի ազգային ինքնուրոյնութեան։

Կ. ՊՕԼԻՍ.—Կրետէի նահանգապետ նշանակուած է Նիկոլակի-էֆէնդի Սարդինացին՝ — Պարիզի թիւրքական դեսպանութեան նախկին խորհրդականը։

ՎԻԵՆՆԱ. — Մինիստրութիւնն, ըստ երևութին, մտադիր է զիջումն անել չեխերին և զոհել ժողովրդական կրթութեան մինիստր Գաուչին, որ զայրացրել էր նրանց ուսումնարանական ծրագրի բողոքը։

ԲԵՐԼԻՆ.—Կայսրուհին ուղևորեց Էլբայի ստորին մասերը, հեղեղումից վնասուած տեղերը դիտելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 Ապրիլ.—Երէկ, կողոպտելու նպատակով մորթոտուած են տիկին Միկլուխա-Մակլայ յայտնի ճանապարհորդի հօրաքոյրը և նրա աղախինը։ Գլխաւոր ոճրագործն է ոմն Կորոլեվ, հանգուցեալի նախկին աղախնի որդին, որ կալանաւորուած է իւր մօր հետ. ոճրագործութեան մասնակիցներին որոնում են։

ԱԹԷՆՔ.—Թիւրքական դեսպանը ետ չի կանչուիլ։ Դա կարող է մեծ ապացոյց լինել Թիւրքիայի և Յունաստանի մէջ յարաբերութիւնները լաւանալուն։

ՀՌՈՄ.—Կրիսպին պատգամաւորների ժողովում պատասխանելով Իտալիայի—Ֆրանսիայի յարաբերութիւնների մասին եղած հարցին, ասաց, որ Աւստրիայի և Գերմանիայի հետ կապուած պայմանները նպատակ ունին խաղաղութիւնն պահպանելու, որ այդ միակ դաշնակցութիւններն են, որ համապատասխանում են Իտալիայի ցամաքային շահերին։ Նա, Կրիսպին միշտ ճանաչել է այդ դաշնակցութիւնների անհրաժեշտութիւնը։ Իտալիան, իւր ծագման պատճառով, պարտական է պաշտպանելու ազգութիւնների ծագումը, իսկ դաշնակցութիւններն էլ նրա համար են, որպէս զի Իտալիան ապահովուի անորոշ դիպուածներից։ Յարաբերութիւններն Ֆրանսիայի հետ լաւ են և Իտալիան չի միանալ Ֆրանսիայի դէմ ուղղած քաղաքականութեան։ Միջերկրական ծովը իտալական կղզի չի դառնալ, բայց նա ֆրանսիական էլ չպէտք է դառնայ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 Ապրիլ.—Բարձրագոյն պալատը ժամանում է Պետերբուրգ Զատկի երեկոյեան հանդիսաւոր մուտք գործելու համար Ձմերային պալատը։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ Հարաւ - արևմտեան ճանապարհների ընկերութիւնը շուտով կսկսի ձեռնարկել Ումանի ճիւղի շինութեան։

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Ցուցահանդէսի բացումը վերջնականապէս նշանակուած է մայիսի 6-ին։ Բացման ներկայ լինել ցանկացող օտար լրագրական թղթակիցները պէտք է իրենց անձնաւորութեան մասին ներկայացնեն հաստատագրեր ոչ ուշ քան մայիսի 4-ը։

ԲՐԻՒՍՍԷԼ. — «Independance Bélge»-ը հաղորդում է, որ գրաֆ Վօլկէնշտայնի տեղ Պետերբուրգում աւստրիական դեսպան նշանակվում է գրաֆ Դէյմը՝ Մինխէնի ներկայ աւստրիական դեսպանը։

ԲԵԼԳՐԱԴ. — Մօնաստըրից և Բիգօեալից եկողների պատմելով մի կողմից յոյների և սերբերի և միւս կողմից Թիւրքերի մէջ արիւնահեղ կռիւներ են տեղի ունեցել։

ՎԵՆՆԱ. — Կլիմէնտին հերցոգուհին, որ ներկայումս Վեննայումն է գտնվում, արձակում է պրինց Կօբուրգի այստեղի պալատական շտատը և ծախում է նրա ժողովածուները։

ԲԵՐԼԻՆ.—Կայսրը թողեց անկողինը և ընդունեց զեկուցումներ։

ՀՌՕՄ.—Կամէր-Եունկէր Իզվօլսկին շարունակում է բանակցութիւններն Ամարդիի հետ։

Յունիսին հանդիսաւոր կօնսիստարիա կը կայանայ, ուր պապը մի քանի լեհ եպիսկոպոսներ կը ձեռնադրէ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 Ապրիլի.—Լայբ գվարդիայի գնդի րօտմիստր Մեծ Իշխան Պավել Ալէքսանդրօվիչը բարձրացրած է գնդապետական աստիճանի՝ Ֆլիգել—ադիւտանտի աստիճանում թողնելով։ Շնորհած են՝—ինֆանտէրիայի գեներալ Միլլէրին Ալէքսանդր Նեվացու բրիլիանտէ շքանշանը բարձրագոյն հրովարտակով. մայրաքաղաքի մի քանի ուսումնարանների երաժշտական մասի տեսուչ Հենզէլտին Աննայի I աստիճան. գաղտնի խորհրդականի աստիճան շնորհուած է Եկատերինօսլավի նահանգապետ Բատիւշկօվին և Կօստրօմայի՝ Կալաչեվին, պետական գանձարանի դեպարտամէնտի տեսուչ Գալանդին և Պետերբուրգի քաղաքագլուխ Լիխաչեվին. Աննայի I աստիճան՝—Ուֆայի նահանգապետ Պօլտօրացկուն, պօստային և հեռագրական գլխաւոր կառավարչի օգնական Սկալլկօվսկուն, պետական կալուածների մինիստրութեան ընդհանուր գործերի դեպարտամէնտի տեսուչ Տրիրօգօվին, հանքային դեպարտամէնտի կառավարիչ Կուլիբինին, երկրագործական դեպարտամէնտի կառավարիչ Մալքատինին և Թիֆլիսի վերահսկող պալատի կառավարիչ Բուտըրկինին. Ստանիսլավ I աստիճանը՝—Տօբօլի նահանգապետ Տրօյցկուն և Կօվնօյի նահանգապետ Կուրօվսկուն. Վլադիմիր II աստիճանը Նիժնիյ-Նովգօրօդի նահանգապետ Բարանօվին։

Գերմանական դեսպանը Բարձրագոյն պալատում, իւր կառավարութեան կարգադրութեամբ, Թագաւոր Կայսրին յանձնելու համար հասցրել է Վիլհելմ կայսրի մահից յետոյ մնացած ս. Գէորգի և ս. Վլադիմիրի առաջին աստիճանները, որոնց վերաբերմամբ ի Տէր հանգուցեալ Կայսրը հետևեալ կարգադրութիւնն է թողել. «Յիշեալ կարգերի իսկական նշանները պէտք է վերադարձուին ռուսական Կայսրին, որպէս իմ շնորհապարտութեանս նշան՝ ինձ ցոյց տրուած բարձր արժանիքի համար»։ Հանգուցեալ կայսրի դէպի Ռուսիան տածած անկեղծ համակրութեան այսպիսի ապացոյցը խորը յուզեց Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրին։

ԲԵՐԼԻՆ, 25 Ապրիլի.—Կայսրի դրութիւնը վատ է, որի պատճառով կուրսը իջաւ։

ՊԱՐԻԶ.—Երէկ բոլոր Ֆրանսիայում քաղաքային վարչութիւնների ընտրութիւններ եղան, որ ընդհանրապէս նպաստաւոր եղան հասարակապետականներին. մի քանի դեպարտամէնտներում մի քանի աղմկալի ցոյցեր եղան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 Ապրիլի.—Բարձրագոյն պալատի մինիստրութեան գլխաւոր վերահսկիչ Պետրօվը նշանակուած է Նորին Կայսերական Մեծութեան կաբինէի կառավարիչ։ Նրան շնորհուած է Աննայի I աստիճանը։

Օստաշկօվեան վաճառական Սավինների ցեղի հարիւրամեայ գործունէութեան համար այդ ցեղի ներկայացուցիչներին շնորհուած է ցեղական ազնուականութիւն։

Շնորհուած են՝—օբէր-շէնկ Գրօտին և օբէր-կամերհէր Նարըշկինին ս. Ալէքսանդր Նեվացու շքանշանները բրիլիանտներով զարդարած. Լէյբ-բժիշկ Բօտկինին՝ Ալէքսանդր Նեվացու շքանշանը և գեղարուեստական ճեմարանի տեսուչ Շամշինին գաղտնի խորհրդականի աստիճան։

ԲԵՐԼԻՆ.—Երէկ ճաշից յետոյ կայսրի առողջութիւնը լաւ էր և նա կարողացաւ կրկին պարապել։

ՊԱՐԻԶ.—Բուլանժէն Տիշլում, զինագործարանի բանուորների որոշումով, ընտրուած է տեղական քաղաքային վարչութեան անդամ։ Ուրբաթ Բուլանժէն ուղևորում է Հիւսիսային դեպարտամէնտ, ուր կայցելէ մի քանի քաղաքներ և ներկայ կը լինի Լիլլում և Սէն-Կենտէնում բանկէտներին։

Կ. ՊՕԼԻՍ.—Վճռուած է նոր ամրութիւններ բարձրացնել Ադրիանուպօլսի և Չիտալջինի մօտ. Կ. Պօլսի մօտ Չիտալջինում կազմըվում է զինուած բանակ 50,000 հոգուց։

Մակեդոնիայից հաղորդում են նոր երևացող զինուած աւազակային խմբերի մասին։

ԲՈՒՔԱՐԵՍՏ.—Երէկ, երեկոյեան ժամի մօտերքը, ծառայութիւնից զրկուած մի սերժանտ, որ յետոյ ներողութիւն ստանալով հաշուած էր քաղաքային ոստիկանութեան մէջ, երկու անգամ հրացան արձակեց մանր արճիճներով արքայական պալատի վերայ և ջարդեց ապակին։ Նա անմիջապէս կալանաւորուեց, որի միջոցին թագաւորի դէմ սպառնալիքներ արեց։ Կարծում են, որ սերժանտը արբած դրութեան մէջ էր և նեղացած էր իրեն ծառայութիւնից արձակելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 Ապրիլի.—«С. П. Вѣд.» հաղորդում է, որ անտառային նոր օրէնքն այժմ համաձայնեցրած է կօդիֆիկացիօնային բաժնի գլխաւոր կառավարչի կարծիքի հետ. բայց պետական խորհրդում եղած շատ գործերի պատճառով, նրա վերաքննութիւնը թողած է աշնանային ժողովին։

«Нов.»-ն հաղորդում է, որ նախագիծ է կազմվում Ուրալեան ճանապարհը Սամարայի ճանապարհի հետ Տօմիլօվի մօտ միացնելու։

ՑԵՏԻՆԻԷ.—Երէկ, հանդիսաւոր ժամասացութիւնից յետոյ, իշխան Նիկօլայը վօեվօդների և ժողովըրդի ներկայութեամբ հաստատեց պրօֆէսսոր Բօգիշեվիչի մշակած նոր օրէնքները. միևնոյն ժամանակ կարդացուած է հրաման, որի մէջ շնորհակալութիւն է յայտնուած Ալէքսանդր II և Ալէքսանդր III Կայսրներին՝ բոլոր սըլաւեանների պաշտպաններին։ Ի վերջոյ իշխանը մի երկար ճառ խօսեց, որ ժողովրդի կողմից «Ժիվեօ»ով ընդունուեց։

ԲՈՒՔԱՐԵՍՏ.—Ասում են, որ արքունի պալատի պատուհանին հրացան արձակող սերժանտը զէնք է եղել մի կուսակցութեան և իւր վարմունքի առիթ է առել այն, որ չէ ցանկացել օտարին տեսնել Ռումինիայի գահի վերայ։

ՍՕՖԻԱ.—Բօլղարական կառավարութիւնը Կլիմէնտ մետրապօլիտին չէ թոյլ տալիս Տրնօվօյում քահանայագործութիւն անելու՝ նրա դէպի Կօբուրգն ունեցած թշնամութեան պատճառով։ Պրինցին մօտ մարդիկ լուր են տարածում, որ եթէ նրա դէմ բռնի միջոցներ գործ դրուին, այն ժամանակ նա կը հրատարակէ Բօլղարիայի անկախութիւնը։

ԲՈՒԽԱՐԱ.—Վարշավացի ձեռնարկողների ընկերութիւնն այստեղ հիմնում է բամբակ մաքրող հաստատութիւն։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

26 ապրիլի։

Լօնդօն 120, ր., 120,80 ր., 121,40 ր.

Համբուրգ 59,62 59,50 ր.,

Պարիզ 48, ր., 47,85 ր.,

Պօլուիմպերիալ .	9	ր.	65 կ.	սակ.
Մաքս. կուպօն	192	ր.	50 կ.	սակ.
Արծաթ	1	ր.	40 կ.	սակ.
Բօրսային դիս.	5⁰/₀ և 7⁰/₀			
Պետակ. բանկի 5⁰/₀				
1-ին շրջանի. .	99	ր.	25 կ.	գն.
2-րդ	98	ր.	62 կ.	սակ.
3-րդ	98	ր.	50 կ.	գն.
4-րդ	98	ր.	50 կ.	գն.
5-րդ	98	ր.	50 կ.	գն.
6-րդ	—			
Վերջին 4⁰/₀ փոխառութիւնը . .	82	ր.	87 կ.	գն.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5⁰/₀ տոմսեր,				
1-ին շրջանի .	99	ր.	— կ.	գն.
2-րդ	98	ր.	12 կ.	գն.
3-րդ	98	ր.	25 կ.	գն.
Առաջին 5⁰/₀ ներքին փոխառութեան				
տոմսեր . . .	269	ր.	— կ.	գն.
2-րդ	243	ր.	— կ.	գն.
5¹/₂⁰/₀ ըէնտեր .	103	ր.	— կ.	ծախ.
Ոսկէ ըէնտ . .	200	ր.	25 կ.	սակ.
Թիֆ. քաղ. վարկի ընկեր.				
օբլիգ. . . .	—	ր.	— կ.	ծ.

Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարմնի մասերի, մանաւանդ ոտի մատների փտուկի դէմ

ԳԱՅԼՄԱՆԻՆԸ

Ծախվում է դեղատներում, նոյնպէս և դեղավաճառների մօտ Եւրոպայի նշանաւոր և Ռուսիայի բոլոր քաղաքներում։ Գլխաւոր դէպօն գտնվում է Վ ա ր շ ա վ ա յ ու մ՝ հնարողի մօտ, դեղատնատիրոջ, Փարմացիայի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ մօտ, Էլէքտօրալնայա փողոց, № 39։ Մեծ տուփով Գ ա յ լ մ ա ն ի ն ը Վարշավում արժէ 50 կոպէկ, փոքրը 30 կոպէկ։

ՊԷՏՔ Է ԽՈՅՍ ՏԱԼ ԿԵՂԾԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր տուփի վերայ գտնուի գործադրութեան բացատրութիւնն ու Պարիզի ցուցահանդէսի մեդալները։

(M. 40,700) 10—1

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է և շուտով մամուլի տակ կը մտնէ՝

ԲՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

հեղ. Անդրէաս Գաբրիէլլի-ի, Բարի-ի արքայական արուեստագիտական ճեմարանի իտալական գրականութեան պրօֆէսսորի, Թարգմ. Գրիգոր Տահրուդաղեանց։

10—1

Թիֆլիսի քաղաքացի ԱԻԵՏԻՔ ԵՒ ԵՓԵՄԻԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԼԻԼԻՓԱՐԵԱՆՆԵՐՆ և իշխանուհի ՄԱՐԻԱՄ ԱԻԵՏԻՔԵԱՆ ՌՈՒՍԻԵՎ-ԿՈՐՉԻԲԱՇԵՎԱՆ սրտի խորին ցաւով յայտնում են իրենց բարեկամներին և ծանօթներին առաջին երկուսը իրենց անդրանիկ որդու և երրորդը իւր եղբօր՝ ԵԱԳՕՐ ԱԻԵՏԻՔԵԱՆ ԼԻԼԻՓԱՐԵԱՆՑԻ մահը, որ տեղի է ունեցել Ս.-Պետերբուրգում, սոյն տարուայ մարտին։

Հանգուցեալի այգը կը կատարուի հինգշաբթի, ապրիլի 28-ին, Միքայէլեան փողոցի ս. Մարիամ Աստուածածնայ եկեղեցում (Վօրօնցօվի մօտ)։ Իրենք բնակւում են Կրասնօգօրսկի փողոցում, տուն № 7. 1—1

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

(Кабинетъ для чтенія газетъ и журналовъ)

Թիֆլիս, Դվօրցօվայա փողոց, գալէրէյ նախկին Արծրունիների, Լանկօի երաժշտական մագազինի մօտ, № 93.

Ստացվում են թէ արտասահմանեան, թէ ռուսաց և թէ տեղական ամեն լեզուով լրագիրներ և ամսագիրներ։

ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ բաց է առաւօտեան 9-ից մինչև երեկոյեան 9 ժամը։

Մուտքը հինգ կոպէկ։

10—7

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Խոնարհաբար խնդրվում է այն անձերից, որոնք Խարկօվ գալով կը ցանկանան «Ռուֆի» հիւրանոցն իջնել, պահանջեն կառավարներից, որ իրանք նրան անպատճառ տանեն Ռըբնայա փողոցը (Ունիվերսիտէտսկայն անկիւնը), ուշադրութիւն չդարձնելով նրանց խօսքի վերայ, թէ Ռուֆի հիւրանոցի բոլոր սենեակները բռնուած են կամ նորոգվում են և այլն, որոնք առաջանում են միայն նրանից, որ Ռուֆի հիւրանոցը կառավարներին ոչինչ աւելորդ վարձատրութիւն չէ տալիս ուղևորներին տանելու համար։

ՍԵՆԵԱԿՆԵՐ 75 ԿՈՊԷԿԻՑ ՄԻՆՉԵՒ 5 Ր. ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՀԻՒՐԱՆՈՑԻ ԲՈԼՈՐ ՑԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ. ՓԱՌԱՒՈՐ ԶԱՐԴԱՐՈՒԱԾ ՃԱՇԱՐԱՆ. ԽԻՍՏ ՉԱՓԱՒՈՐ ԳՆԵՐ։

(M. 19,118) 13—5

Ա Ս Տ Ղ Ի Կ Ա Ն Օ Ճ Ա Ռ
կտորը 60 կոպ.
Ա Ր Ե Ւ Ա Ծ Ա Ղ Կ Ա Յ Ի Ն ՊՕՊՊԻ
կտորը 50 կոպ.
Արևածաղկի թերթերից
Յ. Գ. ՊՕՊՊԸ Աւստրիական Արքունի պալատական մատակարար
Վեննա I Rognergasse № 2.

Ծախվում են Ռուսիայի և արտասահմանի բոլոր լաւ հոտաւէտ իւղեղէնների, դեղատնային և գալանտերային վաճառանոցներում։

Անպատճառ Պօպպի Օճառ պահանջել

Դէպօն՝ Թիֆլիս, Դեղատնային ապրանքների վաճառման Կովկասի Ընկերութեան և նրա Բագուի բաժանմունքի մէջ, Լանկօ, Պօպօվ։

(M.) 25—11

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ Է

Լուսանկարչական նիւթերի պահեստ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ Ֆ. ԵՆՈՒԽ ԵՒ ԸՆԿ. ՄԱԼԱՅԱ ՄՕՐՍԿԱՅԱ 4.
ՏԷԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՏՕՐՈՒՄ

Միշտ պատրաստ կան

ՕԲԵԿՏԻՎՆԵՐ՝—Դալլմէյերի, Ռօսսի, Շտէյնհէլի, Դերօժի, Ֆրանսի և ուրիշների. ՉՈՐ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ՝—«Իլֆօրդ», Լիւմիէրի, Մօնկհօվէնի, Վարնէրկի, Ֆէլիշի և ուրիշների. ՄՐԹՆՈՒԿՆԵՐ (ԿԱՄԵՐԱ)՝ նորագոյն դրութեան. ԹՈՒՂԹ՝ բրօմօժելատինային, «Իստմէնն» և այլն, նոյնպէս և ՄԻՒՍ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՆԻՒԹԵՐ լուսանկարի համար։ ԱՄԲՈՂՋ ԺՈՂՈՎԱԾՈՒ սիրողների համար 35 րուբլի և աւելի թանկ։ Առաջարկում ենք մանաւանդ, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆՈՐ ՉՈՐ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ «ԻԼՖՕՐԴ» ԲՐԻՏԱՆԻԱ ՎՕՐԿՍԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ ԼՕՆԴՕՆՈՒՄ։

Մեր պահեստի ամբողջ ՑՈՒՑԱԿԸ, տպուելուց յետոյ, ուղարկուելու է ձրիաբար։

(M.) 5—5

Дозволено цензурою. Тифлисъ, 27-го Апрѣля 1888 г. Տպարան Լ. Գ. Կրամարենկօյի Типографія Л. Г. Крамаренко, Гол. пр., д. Читахова.